Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4515-4526

281.69
S-16

B 7001

ՀԱՌՔ

ԸՆԹԵՐՑԵԼԻՔ

ՑԱՒՈՒՐ

ԼԵԳԷՄԲՅԻ ՏՕՆԼԻՄԲՈՒԹԷՆ

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ

ՍՐԲՈՑ

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՀԱՅՑՆ ՄԵՐՈՑ

ՍԱՀԱԿԱՑ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՑ

ՑԱՌԱԿԵՐՏԱՑ

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

ՍՐԲՈՑ ԷՄՈՒՈՑՍ

1863 ՅՈՒՆԻՍ 20·

1863

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

10986
082

Երջանայարգ Պ. Յովհաննէս Միրզա Վանանդեցի

Տնօրէն Դասապետ Սրբոյ Աթոռոյս.

1863. Յունիս 11

Աստ։

Համահաճ հաւանութեամբ պատշաճ դատեցաք ի խրախոյս ընդհանուր Աշակերտաց Ժառանգաւորաց բարեկարգ Ուսումնարանիս, առ այժմ միայն զԱտենաբանութիւնս յառաջագէմ խորէն վարդապետի, Գրիգոր Երզնկացի և Գրիգոր Աբրակերցի Սարկաւագաց, և Բարսեղ Պոլսեցի Ուրարակրի և Բարսեղ Զմիւռնացի Դպրի՝ ի լոյս ընծայել հրատարակութեամբ։

Վասն որոյ բարեյօժար զգացմամբք փութամբ զայս որոշումն մեր յայտ առնել Զերումդ Հոգեհարազատ Սիրելութեան, զի զաշխատութիւն յանձն առջիք զենգեսին Ատենաբանութիւնս վերոյիշատակեալ յառաջագէմ Ուսանողաց յանձնել ի Տպագրութիւն, ի փառաւորութիւն բարեկարգ Ժառանգաւորաց Ուսումնարանի Սրբոյ Աթոռոյս։

Գոհ եմք ամենայնիւ ընդ անձնանուէր աշխատասիրութիւնս Զեր, և ընդ արդիւնաւորութիւն մանաւանդ մեծի Գաշտամանդ.

ԱՆԴԱՄՔ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅՍ

Վրիհանէս. Յարութիւն. Ներսէս.
Վարդապետ. Վարդապետ. Վարդապետ.

Երեմիա. Բառնաբաս.
Վարդապետ. Վարդապետ։

17505-98

Ա.Օ.Դ

Ըստ համահաճ հաւանութեամբ որոշման և գրաւոր հրամանի Գերապատիւ Հարց Արժանընտիր Ընդհանոյ Ցնծրէն Յողովոյ Սրբոյ Էթոռոյս, զՀնգեսին նշանակեալ Ատենաբանութիւնս յառաջադէմ Աշակերտաց Յառանգաւորաց Ուսումնարանիս՝ յանձնեցաք 'ի Տպագրութիւն։

Տնօրէն Դասապետ

Ց. Մ. Վ.

ԾԱՌ Ա.

Ի ՎԵՐԱՑ ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ՀՈԳԵԿՑՈՐԴ ԵՂԲԱՐՔ

Նախանձաւորութիւն է զօրեղ խայթոց, յառաջել յառաքինութիւնս մեծամեծս։

ՍՈՒԱՒԷ

Ի մեծահանդէս աւուրս՝ այն ինչ համախմբեալ կամք 'ի բարեհաճակ Ուսումնարանիս՝ յաւելցուցանել 'ի մեզ զքաղցր յիշատակ երանաշնորհ սրբոց Թարգմանչաց Հարցն մերոց Սահակայ և Մեսրոպայ, խղճ մեծափափաք առթեաց յիս ձկտումն 'ի տենչալն նախանձաւորութիւն, զնոյն ինքն նիւթ առնուլ բանախօսութեանս՝ որ յողովագունից եղև զօրեղ խայթոց, յառաջ կոչս մղել յառաքինութիւնս մեծամեծս, յազատական և 'ի մեքենական արուեստս պիսեանս, և հաստատեալ զնոսա 'ի կատար անդր փառաց և պատուոյ։

Այլ սակայն չեն իմ ատաանօր կամք հոգեկցորդ եղբարքդ, դրուատել զնախանձաւորութիւնն՝ որ ինքնին մեծի դրուատանաց է արժանի. այլ ըստ կարի համառօտիւ իմն ցուցանել զբազմաշահ արդիւնս նորին, և յորդորել զձեզ 'ի նոյն, 'ի յառաջադիմել և եւս յուսմունս կարևորս՝ յորս պարապիքդ անձանձիր աշխատասիրութեամբ։

Ընթիւ են անհամեմատ արդիւնք տենչալոյն նախանձաւորութեան. առ Պերիկղեաւ թէ արագ արագ բարգաւաճեցան ուսմունք և արուեստք Ա-թէնս, և առ Օգոստոսիւ 'ի Հռովմ, համարձակիմ ա-սել՝ զի գլխովին բարի նախանձաւորութեան եղեն արդասիք։ Այն այս զօրեղ զգայուն նմանող լինելոյ արանց վեհագունից, և հետևելոյ հանճարեղ երկա-սիրութեանց, փառաւորեաց անդրէն կարի շատ զի-տալականն աշխարհ 'ի ժամանակս Լէոնի տասներրորդի, և զԳաղղիա՝ առ չորեքտասաներրորդն Լուդու-վիկոսիւ. յորս 'ի վեր երևեցան հանճարք հրաշալիք, ծաղկեցան և ևս ուսմունք, պայծառացան արհեստք, և հորդեցին ուղի ընդարձակ՝ 'ի հասուցանել զԵւրո-պա յայժմուս գերատիճանն փառաւորութիւն։

Այնմ է արդարև առխիչ զօրութիւն նախան-ձաւորութեան հոգեկցորդ եղբարքք, որ զթուկիդի-դէս շարժեաց 'ի խանդ և 'ի զեղուն սրտի յարա-բորք՝ մխիլ մեծաւ ճգամբ 'ի ձեռնարկ դրաւոր աշ-խատասիրութեանց, և լինել անուանի և բաղմահը-մուտ պատմագիր հնոյն Ելլադայ. և զԱղեքսանդր Մակեդոնացի՝ գուն գործել 'ի մարտագոռ հանդէս պատերազմաց արիանալ քան զԴիւցազուն Հոմերի, և յաղթական փառօք իշխել ոչ եթէ անձուկ սահ-մանացն Տրովադայ, այլ կործանեալ զմիահեծան տե-րութիւնն Պարսից, և զաղգս նուաճեալ բազում, հասուցանել զմակեդոնական փաղանգն մինչև 'ի Գանգէս։ Նոյն՝ և զգերահռչակն Վիրգիլ հանդի-սացոյց նախանձաւոր լինել մեծի փառաց հրաշա-պատումն Հոմերի, և զհանճարիմաստն Կիկերոն՝

սրտագրաւ ճարտարախօսութեանն Դեմոսթենեայ։

Տիւնա, նախանձաւորութիւն զանազանս ոմանս և զվատահամբաւս իսկ փոխարկեաց 'ի համբաւ գե-ղաշուք. նախանձաւորութիւն այն, զնոյն ինքն Դե-մոսթենէս զերիտասարդ խեռ և ստահակ՝ կայոյց ճարտարախօս անուանի և ոտնհար ամենայն մեքե-նայիցն Թակարդելոց 'ի Փիլիպպեայ. նախանձաւո-րութիւն և զՇէքսպիրիր Անգղիացի 'ի ծառայական սպասաւորութենէն բարձրացոյց 'ի գահ նախաթոռ ողբերգակ բանաստեղծութեան։

Դարձուցից արդ զկարգ բանից՝ 'ի մերոյս առնուլ օրինակս յընտանի Դիւցազանց գերահամ-բաւ հանդիսացելոց նախանձաւորութեամբ։ Հայկ նահապետ հայկազեանս Գրոհի, նախագաղափար քաջութեան և հայրենասիրութեան, նախանձախնդիր եղեալ հայրենի փառաց՝ յերեքթևեանն իւր նետ յերկիր հարստէ զամբարտաւանն Բէլ. Արամ՝ նախանձաւոր ըստ ամենայնի Դիւցազնին, յանհնա-բին կոտորածս արտասահման մղէ զթշնամիս Հայ-բենեացն. Պարոյր և Տիգրան Երուանդեան՝ սոյն այս բուռն զգայմամբ արիանան 'ի պատերազմունս. բայց առաւել քան զառաւել փառաւորին յաղթական փառօք Արտաշէս և Տիգրան Արշակունիք՝ զյաղ-թող զենան յառաջ կայս մղելով մինչև Ելլադա. Խոսրով և Տրդատ՝ արհաւիրս ծանուցանս գործելով 'ի Պարսիկս. և յոլովք ևս 'ի Թագաւորացն մերոց և 'ի Նախարարաց՝ նախանձաւոր գոլով անպարտելի Քաջացն առաջնոց, գեր քան զկարծիս կանգնեն յաղ-թուիս նշանաւորս 'ի վերայ թշնամեացն Հայաստանի։

Այն այս սիրայօժար բաղձանք հետևելոյ բարեւոյն՝ և նմանող լինելոյ Առաքինեաց, գրաւեաց ըղձիսս գերերջանիկ սուրբ Հարցն մերոց Սահակայ և Մեսրոպայ՝ որք նախանձաւորք եղով հնորհացն ըստ Առաքելոյն, առ լցան ամենայն բարեմասնութեամբք հոգւոյ, և սրբութեամբ կեանս վարեցին 'ի մարմնի՝ զերիթ անմարմին հրեշտակս։

Երանաշնորհ սուրբ Հարքն մեր Սահակ և Մեսրոպ, նախատիպք Հայկական Գրականութեան, յօժարամիտ ձեռնտուութեամբ Վռամշապհոյ խաղաղասէր Աբգարին՝ յանազօտ լուսաւորութիւնս ուսմանց պայծառացուցեալ զՀայաստան, աղատս կացուցին զՀայս՝ 'ի մուրալոյ զնշանագիրս Յունաց և Ասորւոց։ Յերկոցունց Նախագաղափարացս առաքինեաց Ճոխացելոյ 'ի գիտութիւնս, 'ի վեր երևեցան ապա Սիւնք հաստատութեան Եկեղեցւոյ և Պատուարք ամուրք Գրականութեան Ազգիս, Ղեւոնդ երեց, Յովհան մանդակունի, Եղնիկ կողբացի, Կորիւն սքանչելի, Եղիշէ քաջաբան, Մովսէս քերթողահայր, Մամբրէ վերծանող, Դաւիթ անյաղթ և այլ ևս յոլովք երանելի Աշակերտք գերերջանիկ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ՝ որք բարի նախանձաւորութեամբ մի քան զմի առաւելեալք 'ի քրիստնաթոր ջանս, 'ի մեծավաստակ առաքինական ձեռնարկս և յերկս բազմօգուտս գրաւոր աշխատասիրութեանց, իբրև Աստեղք լուսափայլք ծագեցին մեզ զճառագայթաւէտ նշոյլս իւրեանց 'ի դառնութեան ժամանակին։

Ապաքէն հոգեկցորդ եղբարքդ, ըստ Իմաստնոյն

ջանացայ փոքր 'ի շատէ ցուցանել 'ի բանախօսութեանս զօգտաւէտ արդիւնս նախանձաւորութեան քաջայայտ օրինակօք Արանց երևելեաց՝ 'ի մերոյ անտի և յօտարացեղեցն. որք 'ի նոյն քաղցրախորժ բերումն սրտի առ ոտն հարին զամենայն խոչ և ըղխութ, և ուշ եդին հետևող լինելոյ բարւոյն և հաճոյականին, և լիովին պսակեալ զնշան իւրեանց հռչակեցան յընդհանուրս, և հռչակեցին դարուց 'ի դարս անմոռաց յիշատակաւ։

Ցանկալի է ինձ և քաղցր յոյժ՝ սիրաւառիլ 'ի նախանձաւորութիւն, և յորդորել ևս զՀեղ 'ի նոյն սիրալի զգացումն։ Նախանձաւոր լիցուք և մեք շնորհացն՝ յառաջել յառաքինութիւնս մեծամեծս, յուսմունս պիտանս, 'ի կրօնասիրութեան, 'ի հայրենասիրութեան և յընկերսիրութեան. երջանկացուցանել զհոգիս մեր իրական բարեօք՝ յորս ոչ գողք մերձենան և ոչ ցեցք ապականեն։ Ո՛հ զի՞ր գաղափարք Աստուածահաճոյ Առաքինեաց և քաջահմուտ Իմաստնոց բազումք եղեն 'ի մեզ 'ի դասուէ Կղերականացն. նմանող լիցուք նոցա, հետևեսցուք բարի նախանձաւորութեամբ անստերիւր շաւղաց Ընտրելոցն պարու։ Նախանձախնդիր լիցուք առաւելուլ մի քան զմի 'ի վաստակս գրաւոր աշխատասիրութեանց, փառաւորել նոքօք և ևս զբարեհրաշակ Ռուսումնարանս։ Դուն գործեսցուք հանապազ ոչ զմեր՝ այլ զհասարակացն նախամեծար վարկանել զօգուտ. յօժարամիտ փութով և 'ի սեր անհամեմատ՝ սիրեսցուք զԱզգ մեր և զՀայրենիս, և զհաւատիս անկեղծ զգացմանց մերոց՝ ոչ 'ի բանս, այլ

յիրական սրդիւնա գործոց հրապարակեցուք յայտ յանդիման. և հուսկ ուրեմն ուշ 'ի կուրծս մեր դիցուք նախանձաւորութեամբ գործել հանապազօր զբարին, զհաճոյն և զկատարեալն։

ԱՀԱԿԵՐՏ Ա. ԴԱՍՈՒՆ

Ն՝ասպ

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Վանէյի։



ՃԱՌ Բ.

Ի ՎԵՐԱՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՔ

Խնդիր ինձ կայ այսօր առաջի, խնդիր վեմական՝ որ թէպէտ 'ի վերս քան զկարս իմ և զզօրութիւն մտացս, բայց և այնպէս ձեռնարկեցից 'ի նոյն հասանել 'ի նպատակն իմ՝ դէթ 'ի միջատահմանն։ Ո՛հայրենասիրութենէ կայ ինձ ճառել 'ի շքեղաշուք աւուրս, և ըստ իմոմանն դրուատել զնա և ցուցանել զարգասիան, 'ի յորդոր հոգեկցորդ Եղբարց իմոց 'ի նոյն սիրալի զգացումն։ Զեն ինձ պէտք աստանօր դիմել 'ի սեթևեթեալ պաճուճանս ճարտարիսօսութեան, և այնու ճոխացուցանել զբանս իմ. զի նիւթ ատենաբանութեան իմում ինքնին գոլով վեմական, դարձուածք բանից ոչ եթէ վեմացուսցեն զայն, այլ թերևս և նուաստացուսցեն իսկ բազմից։

Զիք ինչ քաղցր քան զսէր Հայրենեաց, ասաց՝ որ ասացն. և կարի յիրաւունս։ Բանզի այս բուռն և քաղցրախայթ զգացումն այնպէս վառէ տոչորէ ըղսիրտս, մինչև բազմաց մոռացեալ իսպառ զամենայն դիւրութիւն և զհանգիստ՝ դիմադրաւեն անվեհեր համարձակութեամբ 'ի մահահրաւէր վտանգս պատերազմաց, և արիանան 'ի փրկութիւն Հայրենեաց. յօժարակամ ընտրեալ զմահ փառաշուք՝ քան զդէրութիւն ապաշուք։ Սիրելի են այն, ըստ Կիկերոնի

բարեկամք, սիրելի են մերձաւորք և ընտանիք, այլ այս ամենայն սիրոյ բովանդակութիւն է Հայրենիքն։ Հռեգուլոս հռչակաւորն 'ի զօրավարս Հռովմայեցւոց՝ և զկեանս իսկ, զգեր 'ի վերոյն 'ի բարիս բնութեան, առ ոչինչ համարեցաւ առ օգտիւ Հայրենեաց. և անլսող գտեալ բուռն Թախանձանաց ծերակուտին և բարեկամացն, դարձաւ անդրէն 'ի Կարքեդոն, կամակար ազատութեամբ ընտրեաց զմահ, և իւրով մահուամբ մանաւանդ՝ փութացոյց զկործանումն քաղաքին։ Մարկոս Բրուտոս՝ զորդիս իւր դաւադիրս 'ի նպաստ Տարկուինեանց, դատապարտեաց 'ի մահ. ցուցեալ քաջայայտ զի առաւել քան զորդիսն՝ սիրէր զՀայրենիս։ Ամբէ. քանի՞ բուռն զօրութեամբ գրաւեալ էր Հայրենասիրութիւն և ըղսիրտ Կոդրոսի արքային Աթենացւոց. որոյ 'ի լսել 'ի պատգամախօսէն, թէ այն Ժողովուրդ յաղթող ընդդէմ թշնամւոյն հանդիսասցի՝ որոյ առաջնորդն անկանիցի 'ի պատերազմի, իսկ և իսկ ծպտեալ 'ի կերպարանս մխեցաւ յառաջ կոյս, և զբազուս 'ի թշնամեաց դիաթաւալ յերկիր կործանեալ, ինքն ևս նետահար փչեաց զոգին՝ յաղթանակեալ 'ի մահուն։

Թէ քանի՞օն ունի քաղցրութիւն սէրն Հայրենեաց, պանդուխտք տարամերժք 'ի ցանկալի սահմանացն՝ յորս ծնան և սնան, դիտեն մանաւանդ հաւատեաւ. թէև 'ի նժդեհութեանն ճոխացեալք իցեն առաւելապէս բարեօք բախտի, բայց և այնպէս անմոռաց ունին 'ի յուշի զմարգագետինս դալարագեղս՝ յորս ճեմ առեալ գնային երբեմն 'ի լուր մայելոյ խաշանցն արօտականաց. զերիտս ծածկեալս սա-

զարթախիտ ծառովք՝ ուր դիմէին յորս ազգի ազգի երէց, և զքաղցրակարկաչ վտակն ականակիտ՝ առ որոյ եղերբ նստեալ 'ի հանդիստ խոնջեալ անդամոց, կամ 'ի զբօսանս, դիտէին ակնպիշ զգետահետիլ դնալ նորին փախստական ընդ դաշտն ծաղկաւէտ։

Այս բնաւոր բերումն քաղաքական առաքինութեան՝ այն է Հայրենասիրութեան, և 'ի մեր իսկ հաստատմամբ տարբացեալ է 'ի հոգիս. թէ տեսանեմք և լսեմք զի այլք 'ի բան բերանց, կամ գրովք հլուչակեն զվաղեմի փառս Հայրենի աշխարհին մերոյ, և զճշմարտութեան թեկն ածեալ խոստովանին զդրախտին անդր հաստատութիւն, և զայլ պարծանս անզուգականս յիշատակեն մի առ մի՝ որովք թագուհի համօրէն աշխարհի հանդիսացեալ է ցանկալին մեր Հայաստան, փառաւորիմք անդր քան զչափ, և յոգեպարարս ուրախութիւնս համակեալք՝ գոչեմք բերանալիս. ահ, զի՞ քաղցր է մեզ Հայաստան՝ դրախտավայրն մեր Հայրենիք։ Այլ սակայն թէ ոք փորձ փորձեսցէ թափուր 'ի փառաց երևեցուցանել զնա վատութեամբ՝ կամ անգիտութեամբ, և յանիրաւի վատահամբաւել, իբր այն թէ չէ ծնող քաջաց և առաքինեաց, վշտակրիմք և 'ի խոր խոցիմք, և անդէն ձեռնարկեմք յապացոյցս հզօրս և 'ի փաստս անհերքելիս՝ զամենայն ճիգն թափելով 'ի պաշտպանութիւն իրաւանց։

Հայրենասիրութիւն իբրու զմագնիս առ ինքն կոչէ զսիրտ մարդոյ բանականի. որ ըստ չափու ըգգացողութեանն գուն գործէ, տքնի հանապազ անձանձիր վութով առաւելուլ զփառս Հայրենեացն

և նախանձելի զնա կացուցանել իւրոյն և օտարաց։ Ազգք իւրաքանչիւր բնաւոր բերմամբ սիրեն զՀայրենիս իւրեանց, և յայլ և այլ առիթս պարծանաց ջանան ցուցանել գերամեծար քան զայլս։ Յոյնք պարծին առաւելապէս ՅԱԹԷՆՈ և 'ի Սպարտա. Հռովմայեցիք՝ 'ի Հռովմ, և այլք ՅԱզգաց նոյնպէս 'ի Հայրենիս իւրեանց՝ յորս ծնան և սնան, և մատենագիրք նոցին երկնաչափ զնոսա բարձրացուցանեն։ Բայց միթէ հաւասարիցի՞ն ինչ նոքա անզուգական փառաց ադինավայրն Հայաստանի. Թող պարծեսցին Յոյնք ՅԱԹԷՆՈ՝ իբր լինել տեղի իմաստութեան և գեղարուեստից, 'ի Սպարտա՝ լինել ծնող քաջարանց խմբից զոռ պատերազմողաց. նոյնպէս և Հռովմայեցիք դրուատեսցեն զՀռովմ՝ իբր երկոքումբք ևս փառաւորեալ անդր քան զչափ, այն է քաջութեամբ և իմաստութեամբ։ Այո՛, պարծանք իրաւացիք, զորս ո՛չ ոք կարէ ուրանալ. բայց և ո՛չ այնպէս շնաշխարհիկ՝ համեմատութեամբ փառացն Հայաստանի։

Հայաստան ո՛չ միայն գերածայրեալ 'ի փառս ծննդեամբ որդւոց առաքինեաց, քաջայաղթ Դիւցազանց և ներհուն իմաստնոց, այլ և անանման պարծանօք լինելոյ Հայրենիք ընդհանուր մարդկութեան սեռի։ Զի՞թէ Յոյնք և Հռովմայեցիք և համօրէն Ազգք աշխարհիս սերեցան 'ի նախամարդոյն Ադամայ, ո՞ւր ապա բնակեցաւ Ադամ. ո՞ւր ծնաւ զորդիս՝ յետ կորուսանելոյ զվայելս փափկութեան. ո՞չ ապաքէն 'ի Հայաստան, ո՞չ և զԴրախտն հրաշագեղ՝ տնկեաց Աստուած նա մանաւանդ 'ի բարձրագաւառն Արարատայ, յոր գետք քառաւաղք յանպղտոր վճռութիւնս

իւրեանց անխառն ընթանան առուգանել զերկիր։

Տի՞նա, և յետ համայնաջինջ ջրհեղեղին մինչդեռ բովանդակ երկիր խորասուզեալ կայր ընդ ջրով, նախ զառաջինն երևեցան բարձունք լերինն Արարատայ. անդ հանգեաւ տապանն Նոյեան. անդ Նոյ հաստատեաց տեղի բնակութեան, անուանեալ զայն Նախիջևան. անդ բազմացան որդիք և թոռունք Նահապետին, և անտի սփռեցան մարդիկ ընդ երկիր։ Որովք Հայաստան կայ մեծ վեհագոյն քան զամենայն աշխարհս, և առաջին Հայրենիք ցեղիս մարդկութեան. բարգաւաճեալ ամենայն բարեօք բնութեան, և գերազանցեալ 'ի փառս քան զամենեսեան։

Այլ սակայն ո՛րչափ քաղցր է և շքեղապանծ ցանկալին Հայաստան, սեպհական մեր Հայրենիք, նոյն համեմատութեամբ վեհ հանդիսացան անդանօր Հայրենասէրք պանծալիք, շնաշխարհիկ պարծանք Ազգիս Թորգոմեան, մեծամեծ գաղափարք քաջութեան և հայրենասիրութեան, և անպարտելի դիւցազունք։ Որպիսի է Հայկ նահապետ համազգային լրութեան, որ վառեալ 'ի սէր Հայրենեաց, ել պատերազմաւ 'ի վերայ անօրէն հսկային Ներբովթայ, և նետաձիգ հար սատակեաց զնա չարաչար։ Հանդուգնատիպ մեծի Հայրենասիրին յոլովք 'ի թագաւորացն մերոց և յոլովագոյնք նաև Իշխանաց՝ ըզփառս Հայաստանի դուն գործեցին հասուցանել 'ի գերազանց պայծառութիւն, արդեամբք քաջամասնութեանց։

Բաբէ, տարասպայման բուռն էր զգացումն հայրենասիրութեան և երանելի Հայրապետին մերոյ

մեծին Ներսեսի, որ յետ բազմազգի աղէտիցն և վշշատաց՝ որոց տարաւ համբերատար ոգւով, 'ի վերայ լերինն Նպատայ՝ հանգոյն Նախամարգարէին մեծի բազկատարած աղօթէր և սրտաբուղխ հայցուածովք խնդրէր Աստուծոյ հալածական վարել զթշնամին հաւատոյ, զմարդախոշոշ զօրականս Պարսից, և ազատել զՀայաստան 'ի հինից յարձակմանց։ Կարի մեծ էր և հայրենասիրութիւն լուսանորոգ սրբոյ Հարցն մերոց Սահակայ և Մեսրովպայ, որք զբարոյական գերութիւն Հայաստանի բարձին իսպառ 'ի միջոյ. քաջամարտիկ զօրավարին սիրն Վարդանայ, և քաջայաղթ Վահանայ Մամիկոնէի՝ որք յաղթող հանդիսացան 'ի պատերազմունս և զերծ կացուցին զԱզգ մեր 'ի պիղծ աղանդոյ մոգուցն արևապաշտից։

Այս ուրեմն և մեք օրինակ մեզ կալցուք զՀայրենասէրս պանծալիս՝ որք զյիշատակ անուան իւրեանց անմահ թողին յաշխարհի. ջան 'ի գործ դիցուք յանձինս մեր բերելոյ զնմանութիւն բարելաւութեանց նոցին. և պարտ անհրաժեշտ համարեսցուք սիրել զՀայաստան, սիրել անհամեմատ սիրով, զփորձ առեալ քաջ՝ զի չիք ինչ քաղցր քան զսէր Հայրենեաց։

ԱՀԱԿԵՐՏ Ա. ԴԱՍՈՒՆ
Ն՞ՈՍՊ
ՍԱՐԿԱՒԱԳ ԳՐԻԳՈՐ
Արաբիերդի։

ԺԱՌ Գ.

ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՔ

Ի հոգեզուարճ աւուրս տարեդարձի ծննդեանն բուրեան սրբոյ Թարգմանչաց բազմերախտ Հարցն մերոց, զարթուցից զմիտս իմ 'ի խոր թմբրութենէ, զկրօնասիրութենէ ճառել. ոչ զՀելլենականացն՝ որ մարդկային իմաստութեան էր ծնունդ, այլ զմերոցն՝ որ Աստուածային է պարգև չքնաղատիպ։ Որկեճայլ նուագարանաց և կիթառաց ատ չեն պէտք, մինչ Յաբեթականացս գրոհի Հայկ համախմբեալ կան 'ի հանդէս. այլ պարտ է մեզ զլեզուս մեր, զհարազատ թարգմանս մտաց մերոց՝ շարժել 'ի գովաբանութիւն Աստուածատուր կրօնից։ Այս ամենք ինձ հրաման անհրաժեշտ յառաջ ածել՝ զոր խոստացայ։

Ամենայն գիրք Աստուածաշունչք մեզ խրատ պատուիրանաց աւանդեն՝ ընդ քաղցր լծով կալ մնալ կրօնասիրութեան՝ հեզահամբոյր խոնարհութեամբ։ Վասն զի եղանակ կրօնից Քրիստոնէիցս՝ 'ի սէրն սուրբ և 'ի դաւանութիւնս ճշմարտութեան հաստատի։ Ամենայն ուրեք՝ ուր և մուտ գործէ գերագոյն կատարելութիւնս այս Աստուածգիտութեան, անդ

տարածեալ երևի սէր միաբանութեան և քաղցրութիւն մարդասիրութեան. մաքրափայլ լուսոյ պայծառութեամբ իւրով սրբէ և զտէ զհոգիս մարդկան 'ի տգիտութենէ և յամենայն պղծութենից. և 'ի տեղիս այնոցիկ զըղձալին փոխարերէ իմաստութիւնս և զբրութիւնս։ Դիտէ սա և զՏեսչութիւնն վերին 'ի հաշտութիւն ածել ընդ մեզ, և զառաւելագոյն օգնութիւնս նորին մեզ 'ի թիկունս պատրաստել 'ի նեղութեան. զի ըստ մարգարէին Դաւթի, «խաղաղութիւն բազում է այնոցիկ՝ որք սիրեցին զօրէնս Աստուծոյ»։ Եւ կամ ըստ Անօթոյն շնորհաց, «որոց սիրէնն զԱստուած, յամենայնի գործակից լինի (նոցա Աստուած)»։ Կրօնասիրութիւնն զերկնաձիր պարգևս ձրիատուր շնորհացն Աստուծոյ՝ ամբիծ կենաց և յուսոյ, վարձ և պսակ հատուցանէ. խոստումն անժխտելի ուխտէ՝ որոց սիրով կապեցան ընդ նմա։ Արդարև սորա է գործ տալ ունել կեանս անվախճան ընդ հրեղինացն երկնայնոց Աբքայութեան Աստուծոյ. որպէս Պօղոս՝ որ Քրիստոսիւն խօսէր, յետ զօրէնս և զկրօնս սիրելոյ և կատարելոյ անապատութեամբ՝ պարծելով իմն ասէր. «Զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի, այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան Պսակն»։

Արդարև Սրբազան Հայրք, ոչ ինչ զանդիտեմ լոյս իմն իմանալի անուանել զկրօնասիրութիւնն՝ վառեալ 'ի հոգիս. որպէս ճրագն 'ի տան, և արփւոյն ճառագայթ 'ի տարածութիւնս օդոյն։ Վասնզի պարտի ամենայն ոք ուրոյն ուրոյն զլոյսն գերազանց 'ի միտս և 'ի հոգիս վառ և բորբոք ունել միշտ.

և մի իւիք աղօտացուցանել զայն, զի պատգամ Տէրն ամենակալի է սա. որպէս և երկնաւոր վարդապետն մեր Յիսուս՝ յիւր կենսատիպ սրբոյ Աւետարանին ասէ. «Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ»։ Եկեղեցի հնոյն Իսրայէլի՝ օրէնս ունէր յԱստուծոյ 'ի ձեռն Դաւամարգարէին աւանդեալ, ոչ շիջուցանել զհուրն Տաճարին՝ որ յերկնից էր իջեալ. այլ յորժամ 'ի Բաբելոն 'ի սակս մեղայ գերեցան, թաղուցին զնա 'ի խորս ուրեք։ Յետ եօթանասուն ամաց կատարման, 'ի դարձին իւրեանց գտին զայն անշիջանելի տեսչութեամբ Տեառն. քանզի լոյն կրօնից 'ի միտս նոցին տակաւին արծարծիւր. այր վասն յաւիտենական Արդարութիւնն՝ անճառահրաշ ողորմութեամբն գթացեալ 'ի նոսա, կրկնակի բորբոքեաց զհուրն սուրբ՝ որով զոհք և պատարագք մատուցեալ լինէին 'ի քաւութիւն յանցանաց։ Այլ յորժամ բարձրացեալ եղեն անօրէնութիւնք նոցա քան զամպս երկնից, և հակառակ զինեցան ընդդէմ օրինաց և Աստուածակրօն կարգաց, և ևս զՏէրն օրինաց և մարգարէից սպանին, անդէն և անդ սպառ սպուռ շիջաւ հուրն մաքրութեան. աւերեցաւ Տաճարն, կործանեցաւ Սեղանն, և գերեցան ինքեանք. իսկ ազգովին, և Աստուածպաշտութիւնն իսկ 'ի նոցունց հեռացաւ։

Ուստի յայտ ուրեմն է՝ թէ մեծ է զօրութիւն կրօնասիրութեան, ո՛ Ազգասէր Հանդիսականք։ Եւ ո՛ր այն ինչ առաքինութիւն՝ որ ընդ այս Աստուածատուր պարգևիս 'ի մէջս կշռոց զուգահաւասարեսցի։ Թէ զկարեկից լինելն ասիցէ՝ որ աղքատաց,

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUN-ARM.SSR
Ե. ՄԱՐՏԻՆՈՎԻ
175605-58

սորա են արդասիք. թէ զվերակացու լինելն որբոց և այրեաց, սորա են իսկապէս արդիւնք։ Եւ զի երկարեցից. գիտելն ճշմարտապէս զկրօնս՝ է ճանաչել զԱստուած. և սիրելն զնա ուղղութեամբ՝ է միանալ ընդ Աստուած։

Եւ զինչ, միթէ մարդ ինչ իցէ զՄովսէս և զՊետրոս, զեղիա Թեսբացի և զԵղիսա մեծ քահանայապետն 'ի մուռացունս մտաց արկանել. յորոց մին՝ գերազանցեալ քան զբնութիւնս մարդկայնոյ, զհիմն եդ ստուերական օրինաց. իսկ մեացելոցն՝ զնախանձ Տեառն ամենակալի բարձեալ յանձինս, և զարդար վրէժխնդրութիւնն 'ի գործ արկեալ՝ քաջապէս արիացան 'ի սակս հայրենատուր կրօնից։

Եւ զինչ ճառեցից 'ի պատկառելի ակմբիս Սրբազան Հայրն, զՀայկազանց սերնդոյս, յորմէ բազուկք յետ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի անցեալ կացին 'ի հանդէս ասպարիզի քաջութեան՝ 'ի պաշտպանութիւն օրինաց և կրօնից. յորս գերակայ գտան քան զամենեսեան յոյսն մեր 'ի յերկինս՝ սուրբն Յուսիկ, և մեծն Ղերսէս՝ սիւնն հաստատութեան սուրբ Եկեղեցւոյ. տեսանողն և մարգարէահրաշ հայրապետն Խահակ պարթև, և բարերար և երախտաւորն Հայաստանեայց Մեսրոպայ պանծալին 'ի սրբութեան։ Որոց սիրայորդոր բանիւք խրախուսեալ զորդիս Թորգոմայ՝ ընդ լծով մուծին հնազանդութեան կրօնից, և զքաղցրութիւնս եռուն ճաշակել կրօնասիրութեան Ասքանազեանս աղին. որովք զՀայաստան, զվայրն ադինական՝ իմանալոյն նմանաբերեցին Սիոնի, և զփառս Այրարատայ գեր

քան զաստեղս բարձրացուցեալ զարդարեցին հքեզապանծ, և զորդիս Հայկեանս գրոհի առհասարակ որդիս լուսոյ վերադրեցին։

Այո՛, տեսաք զկրօնաւորութիւնն սահման առաքինութեան, յորում կամք գերագոյն էին տեղի կալեալ հանդէպ. և շնորհաց նորին յորդութիւնք յեօթնառաջս բաժանեալ՝ արբուցանել խոստանան զ'ի սահման անդր առկայացեալսն 'ի վտակացն. որոց սկիզբն և պատճառ՝ նոյն ինքն է անախտ Բնութիւնն։ Այսն որոյ և մեզ՝ որ համախմբեալս եմք 'ի տարեդարձի աւուրս տօնախմբութեան կրօնասէր սրբազան Հայրապետացն մերոց Սահակայ և Մեսրոպայ, հարկ 'ի վերայ կայ թեւակոխել 'ի սահմանս բարօրութեան և բարեբաստութեան։

Գերապատիւ Սրբազան Հայր, ցանկալի մեզ երևեսցի կիրառութիւն կրօնասիրութեան. Ազգասէր Հանդիսականք, ըղձալի թուեսցի մեզ գործառնութիւն ճառեցեալս կրօնասիրութեան. սիրակցորդ և համամիտ եղբարք, ճշգրտապէս բացափայլեսցի 'ի հոգիս մեր և 'ի միտս, և ընդ մեզ միաւորեալ անբաժ կացցէ և մնասցէ այս մեծութիւն անապական ճոխութեան, զոր 'ի ձեռանէ Տեառն իսկ ընկալաք։ Այո՛, գիտեմք և քաջ իսկ ճանաչեմք զօգուտն մեր և զօգտաւէտութիւն կրօնասիրութեան. զի որպէս գոյն ինչ միջնորդութեամբ լուսոյ բացերևապէս մերկապարանոց լինի և գայ 'ի ճանաչումն ամենայն ումեք, այսպէս և մարմին մարդոյ հոգւով շարժի և կենդանի պահի. և կենդանութի հոգւոյն է կիրառութիւնն սուրբ կրօնից։ Այսն որոյ պար-

տիմք ամենայն երկիւղածութեամբ և բարեպաշտութեամբ պատկառ կալ 'ի ծառայութիւն կրօնասիրութեան։ Օ՛հոգւոց մերոց Լուսաւորչին խրատական զբանն 'ի միտ ածցուք և 'ի խորս սրտից մերոց անջնջելի փորագրեսցուք. որ պատուիրէ հանապազօր քննող լինել խորհրդոց և բանից և գործոց։ Օ՛սոյն և յարտաքնոյն զգաստից Պիւթագորաս՝ հրամայեաց աշակերտացն իւրոց, յաւուրն երկիցս քննել զանձինս՝ թէ զի՞նչ արարին, որպէս արարին, և վասն ո՞ր արարին։

Ապա ուրեմն մի վերջասցուք 'ի գրկախառնութենէ կրօնասիրութեան, և 'ի միտս և 'ի հոգիս մեր յընդունելս և 'ի խորս տպաւորելոյ զնա. նա մանաւանդ մեք՝ որ զկրօնաւորութեանն կրեմք զանուն, պարտիմք առաւել ընդ դեղատխուր հանդերձից մարմնոյ՝ զպայծառափայլ կրօնասիրութիւնն զգենուլ 'ի հոգիս. որպէս զի զնմանութիւն սրբազան Հարցն առաջնոց յանձինս մեր ունելով, յանմահական կենդանութիւն վերափոխեսցուք. և նոցունց մեծի երախտաւորացն գոլով մեր իսկապէս աշակերտ, մի յետս կասեսցուք 'ի նոցին անմոլար շաւղացն։

Եւ շարժեսցին ելեալք մեր և հնչեսցեն զօրհնաբանութիւն, հայցելով սրտաբուղխ մաղթանօք կալ մնալ Հայկազանցս հանապազօր բարիոք կրօնասիրութեամբ՝ ընդ պահպանողական խնամով յաւիտենական Տեսչութեանն։

ԱՀԱԿԵՐՏ Բ. ԴԱՍՈՒ
Ն՝՝՝

մանեայ իմ ձառ՝ որ վասն երջանկութեան մարդ-
կայինս հոգւոյ։

Ապաքէն չէք որ յաշխարհի՝ որ ոչ իցէ 'ի խըն-
դիր երջանկութեան. այլ բաղումք անծանօթ գոլով
զտեղւոյն՝ ուր ներփակեալ կայ, 'ի զուր աստանդին
'ի գիւա նորուն։ Որպէս այր խորտակեալ 'ի համեղ
կերակուրս կարծելով 'ի ձեռս բերել, լուղի և թա-
ւալի 'ի նոյն. այր բազմահարուստ 'ի մեծագանձ ճո-
խութիւնս իւր հնարի գտանել. այր ունող աւագու-
թեան՝ 'ի գերամբարձ և 'ի պերճական իշխանութեն
երևակայէ երջանկանալ։ Այլ յայսոսիկ անկարելի է
ումեք ձեռբակալել զերջանկութիւն. քանզի թշնա-
մի գոլով իրերաց, հանապազ ոդորին ընդ միմեանս,
և մին՝ զմիւսն անդադար մրցի հալածել. տալով հե-
տամտին ոչ հանգիստ մտաց՝ և ոչ քուն աչաց։ Օրի-
նակ իմն, տեսանեմք զօրհանապազ գնորատի մանկու-
նըս՝ որոց զօրացեալ ըստմանեայ ջիղք ոտիցն, մինչ
նոր 'ի նոր ձկտին 'ի քայլափոխս, բնական իմն ըղձանօք
տենչան համարձակ շրջիլ 'ի ճեմ. այլ 'ի զուր վաս-
տակեալ լքանին։ Հանդուգնատիպ իմն և զտղայ-
ացեալս մտօք, որք փորձեն ուղղել զանձինս 'ի գնացս
երջանկութեան, և արագ 'ի քայլ հասանել յայն՝
անգիտացեալ զուղին արահետ։

Բազումք 'ի գիտնաւորաց զքնաւ ընթացս կե-
նաց իւրեանց ծախեն յընթերցմունս գրոց, որպէս
զի հնարեսցին զերջանկութիւն գտանել. բայց ոչ
այլ ինչ գտցեն այնու՝ քան զանդորրութիւն մտաց։
Եւ որովհետև անդորրութիւն մտաց չէ ճշմարիտ
երջանկութիւն հոգւոյ, վասն որոյ և ոչ տիրապէս

կարէ վերածել զոք 'ի նոյն. նա մանաւանդ և անմը-
տութիւն գիտնաւորին Դեմոկրիտեայ 'ի թշուառու-
թիւն ած զինքն՝ քան յերջանկութիւն. որոյ կուրա-
ցուցեալ զաչս մարմնոյ առ 'ի բանալ զաչս հոգւոյն,
զրկեցաւ 'ի տեսութենէ արեգական։ Եւ զինչ երջ-
անկութիւն է ումեք, թէ և իցէ իբրու զԱրիստոտ-
էլ ներհուն իմաստասէր, և իբրև զՑուլիանոս գի-
տուն բազմագէտ. մինչ չունի գործ ինչ Աստուածա-
հաճոյ առաքինութեան՝ յոյր ձեռն ստասցի զերջան-
կութիւն հոգւոյն. ապա և գիտնաւորք զուրկք յա-
ռաքինութեանց, ոչ կարեն հասանել յերջանկութի։

Իսկ արդ. եթէ յղփացեալք գանձիւք և պեր-
ճացեալք իշխանական գահու, և թարթափողք յըն-
թերցմունս մատենից չ'կարեն գտանել զճշմարիտն
երջանկութիւն, և ոչ գացուք մեք հեշտասէր մար-
մնոյ վիճակեալքս զայն 'ի ստապատիր աշխարհիս։
Քանզի մարմին մարդոյ է գոյացութիւն նիւթական,
որ միշտ 'ի նիւթականս բաղձայ յօրանալ. և հոգին՝
գոյացութիւն աննիւթական, որ անդուլ տքնի ձը-
գել զինքն 'ի վեր 'ի յերկինս՝ միանալ ընդ անմարմի-
նըս. բայց գոլով սոցա ներհականք միմեանց, ոչ մին
թողու միւսոյն 'ի ցանկալին իւր սլանալ, և ոչ միւսն
լքանէ զթշնամին 'ի բաղձալին իւր հեշտանալ. ըստ
այնմ թէ. « մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և
հոգի հակառակ մարմնոյ »։

Սակայն կամեցողական զօրութիւն հոգւոյն եր-
բեմն ապստամբեալ ընդդէմ բանին՝ ընդ թշնամւոյն
իւրոյ միաբանի, որ ստորաքարշ զնա հնարի առնել.
իսկ որ միանգամ թէթև է ընութեամբ, զիաղդ

մարթ իցէ նմա 'ի վայր կոյս բերիլ. այո, յանհնարին է այս. սակայն հոգին 'ի տան մարմնոյ գոլով փակեալ, մինչ 'ի միութեան կայ, բազում այն է զի անճարացեալ հնազանդի, և թշուառացեալ անկանի ընդ պարտեաց մեզաց. ապա ծառայելովն մարմնոյ և թշուառանալովն՝ որպէս կարող լիցի վիճակիլ երջանկութեամբ։ Ուստի և տեղեկանամք 'ի սուրբ Գրոց, զի չարք և մոլեկան կրից ծառայողք՝ ոչ երջանկին, այլ ամենաթշուառ և մշտատանջ անմահութեան վիճակեցան 'ի դժոխս։

Այս զի և անկցորդք իսկ չարութեան և առաքինութեան, ոչ արժանացան յայս երջանկութեան հոգւոյ ժամանել կայան։ Վասն որոյ և 'ի վաղեմի դարս ոչ ոք իսկապէս գտաւ հոգւով երջանիկ։ Ոստ որում 'ի դարս բնական օրինաց, մարդիկ՝ որ իւրովք վաստակօք և բարեօք բնութեան կէին ներծ 'ի մեզաց, ոչ երջանկացան. զի ոչ գիտէին զչարութիւն և զառաքինութիւն։

Ի դարս գրական օրինաց Եբրայեցիք զսրբազան պատգամն ունելով՝ նոքօք վարէին ընդ միմեանս. այլ նոքա ևս ոչ ժառանգեցին զերջանկութիւն. զի զուրկ էին 'ի շնորհական օրինաց։

Ի դարս փիլիսոփայական՝ Իմաստասէրք նուրբ հայեցմամբ 'ի բնական իրս, տեսին ընդ աղօտ, զի գոյ երջանկութիւն իմն հոգւոյ. և առ 'ի ստանալ զայն՝ այլ և այլ սկզբամբք փիլիսոփայութեան ջանային յորդորել զամենայն մարդիկ 'ի բարոյական առաքինութիւնս։ Բայց միոյն սկզբունք ներհական լեալ միւսոյն՝ շուարէին որք ասէին, թէ որում մանայցեն և ում անստատեսցեն։ Որպէս Պատիկեանք ծայրագոյն բարի ասէին զառաքինութիւն, և ծայրագոյն չար զմոլութիւն. այլ զերկոսին իսկ անբաղձոշ թողեալ հանգամանօք։

Պիւթագորաս և Անագսագորաս երևելիք յիմաստասէրս, զերջանկութիւն դնէին 'ի ճանաչման և 'ի նկատման ամենայնի։ Արիստիպպոս ընդ նմին և Կիւրենացիք, զփափկութիւն մարմնոյ և զհեշտութիւն՝ երջանկութիւն հոգւոյ համարէին. որոց ըստ կնի մոլար կարծեացն բազումք հետևեցան, 'ի փափկութիւնս, 'ի հեշտութիւնս և 'ի պերճութիւս աչս արձակեալ։ Այպիկուրոս անուղղախոհն՝ զհեշտութենէ միայն ասէր կախեալ զերջանկութիւն. այլ և այն անպայծ, թէ զբնակաւն հեշտութենէն արդեօք, եթէ ոչ զբարոյականէն. վասն որոյ և եղերեցաւ։

Իսկ այսոքիկ ամենայն կարծիք փիլիսոփայից՝ որք հակառակին մանաւանդ միմեանց, ոչ նշոյլ ինչ ցուցին ճշմարիտ երջանկութեան. զի յաշխարհական իրս յուզախնդիր էին պատանել։ Այլ երջանկութիւն երկնային է, և ոչ բնական յաշխարհի. քանզի 'ի պատիւ ոչ կայանայ երջանկութիւն. զի պատիւ վաստակօք ստացանի, նախանձու չարակնի, և 'ի ստացիչն ծանրաբեռնի։ Ի հարստութիւն չիք երջանկութիւն. զի յոլովք մեծահարստեալք եղեն 'ի շողոմոզաց և 'ի սուտ կարծեաց ոտակին. քան զոր չիք ինչ առաւել քամահական։ Յիշխանութեան ոչ գոյանի երջանկութիւն. զի իշխանութիւն բազմիցս առաւել պատիժ է ուղղողին՝ քան պատիւ. որպէս է տեսանել 'ի Յուլիոս կեսար, 'ի Տիբերիոս և 'ի Ներոն հռովմայեցիս. և 'ի

մերոց անտի՝ 'ի Տիրան, Ամբշակ և 'ի Պապ, և յայլ բազում իշխանաւորս այլ և այլ ազգաց։

Եւ զի երջանկութիւն 'ի ներքին բարիս հոգւոյն կայանայ, ապա և ոչ փառքն երջանկացուցանէ զոք. զի փառքն է արտաքին բարիք։

Յաղագս որոյ ասէ Սենեքայ. "Երանելին 'ի մարդկանէ այն է՝ որում չէք այլ ինչ բարի, բայց որ ինչ հոգւոյն է". առ որ 'ի դէպ գայ բան Տեառն, թէ "Արքայութիւն 'ի ներքս 'ի ձեզ է". և բան սրբազան Առաքելոյն, թէ "խորհուրդ հոգւոյ է կեանք յաւիտենական"։ Ապա 'ի ներքին բարիս է երջանկութիւն, և ոչ յարտաքինս. քանզի և Պիգմալիոն՝ ճոխացեալն արտաքին բարեօք, հիքացաւ մանաւանդ՝ քան երջանկացաւ. և Դիոնէսիոս բռնաւորն Սիրակուսայ թշուառագոյն գտաւ քան զնա։

Եւ արդ՝ խոպառ ծածկեցաւ 'ի մէնջ երջանկութիւն, զի մինչ ցայս վայր չերևեցաւ 'ի միջի. դիմեսցուք ապա առ քրիստոնեայ Աստուածանկատ իմաստասէրս, որք 'ի դարս Շնորհական օրինաց լուսով հոգւոյն տեսին, և ցուցցեն որոց կամք իցեն գտանել զերջանկութիւն։

Այլ սոքա ոչ այլ ինչ իմաստասիրեցին 'ի նկատման անդ 'ի գերբնական իրս սակս երջանկութեան հոգւոյն, բայց եթէ զԱստուածաբանական առաքինութիւնս՝ որք շաւիղ շքեղ են առ երջանկութիւն. և զբարոյական առաքինութիւնս, մանաւանդ առաւելապէս զայնոսիկ՝ որք պատգամացան Աստուածորդւոյն. որով առաջնորդին մարդիկ գնալ 'ի յաւիտենական անմահութիւն։

Եւ քանզի վերջին վախճան մարդոյ՝ Աստուած է, առ որում հանդուցեալ հողածնի, լինի երանելի. բայց թէ ոք զուրկ իցէ Աստուածաբանական և 'ի բարոյական առաքինութեանց, զիարդ մարթ իցէ նմա առ Աստուած հանդչիլ. քանզի որ ոչ զհաճոյս վերին Տեսչութեան կատարէ, յայտ է թէ զընդդէմն գործէ. և որ զընդդէմն գործէ, զրկի յանմահական կենաց. և որ զրկի յանմահական կենաց, ոչ հանդչի առ Աստուած. ապա որ ոչ զհաճոյս վերին Տեսչութեան կատարէ, ոչ հանդչի առ Աստուած։ Ապա ուրեմն, երջանկութիւն հաստատեալ է յառաքինութեան՝ որ հաճոյականն է Աստուածեղէն կամաց։

Ուստի արժան է ամենայն բանականի զպատգամեալսն առ 'ի Փրկչէն արարածոց զԱստուածաբանական առաքինութիւնս ունել յինքեան. զհաւատ ասեմ, որ Աստուածապաշտութիւն ասի Աստուածաբանից. զսէր՝ որ առ Արարիչն և առ ընկերն վերաբերի. որոյ ամփոփեալ յերիս տառս միայն՝ զերկին և զերկիր յինքեան պարփակէ. և զյոյս հաստատուն՝ որ ակնուն ողջոյն լցուցիչ է բաղձանաց։

Իսկ բարոյական առաքինութիւնք՝ որք յաւէտ 'ի սիրոյ յառաջ բղխին, նոքա իբր պաշար են ուղղոյն երջանկութեան. վասն որոյ 'ի սէր բովանդակին նոքա։ Քանզի 'ի սիրոյ ծնանին ազգասիրութիւն, եղբայրսիրութիւն, ընկերսիրութիւն, կրօնք, օրէնք, հայրենասիրական գործք, օգնել միմեանց, բարերարել իրերաց, խնամ տանիլ որբոց և այրեաց, ընուլ զքաղց կարօտելոց, բառնալ զտգիտութիւն համաշ դեաց, և որ ինչ 'ի սոցին սակի են առաքինութիւնք։

Ուստի և չէ անդէպ մայր ամենայն առաքինութեանց կոչել զսէր։

Նա զի և մեծ է զօրութիւն սիրոյն. զի զսիրելին յինքն փոխակերպէ, և զինքն 'ի սիրելին. քանզի ըստ Առաքելոյն, "Աստուած սէր է, և որ կայ 'ի սէր՝ Աստուած բնակէ, և Աստուած 'ի նմա"։ Եւ ըստ իմաստասիրի ումեմն, "Որ զերկիր սիրէ, երկիր լինի. և որ զԱստուած սիրէ, Աստուած լինի"։

Որոյ աղագաւ և Աստուածասէր սրբոց գիտացեալ՝ եթէ սէր մայր է ամենայն բարեաց, որ միակ ակնարկութեամբ փոխադրէ զոք 'ի ստորէ՝ 'ի վեր, և փոխակերպէ յանարգէն՝ 'ի պատուականն, յապականացուէն՝ յանմահութիւն, և 'ի մարդկայնոյ՝ յԱստուածայինն, փոյթ կալան 'ի կեանս իւրեանց զհաւատն նախամեծար դասեալ, պնդիլ զկնի սիրոյ, և բարեբար գտանիլ առ համաղգիս. որով զերջանկութիւն հոգւոյն ընկալան։

Յորոց և երկոքին երանելիք և բարեբարք Հայկազանցս սեռի սուրբն Սահակ և Մեսրոպ, Աստուածաբանական առաքինութեամբ պերճացեալ՝ ետուն զանձինս 'ի գործ բարոյական առաքինութեանց. և անզուգական բարեօք ճոխացուցին զերդիս Հայրենեաց. և ինքեանք եղերեալ զսահման կենաց իւրեանց, որպէս քերուբ անմարմին մի զմիոյ կնի պատցեալ հասին 'ի կայան երջանկութեան, յԱստուածավայրն դաւառ. ուր յարաղուարձ ցնծութեամբ ընդ լուսերամից զմայլին անմահութեամբ։

Իսկ արդ աստանօր վերջ տամ ճառիս՝ զայս ինչ միայն յարելով 'ի նա. զի եթէ աստուածաբանական

և բարոյական առաքինութեամբք ստացանի երջանկութիւն, ապա վայել է ամենայն մարդոյ բանականի առաւելուլ 'ի հաւատ, 'ի յոյս և 'ի սէր, և յամենայն առաքինական գործս բարեաց. քանզի և մարդ վասն այնց գայ յաշխարհ, զի 'ի դառնալն յաշխարհէ վայելեսցէ զերջանկութիւն յաւիտենական վայելմամբ։

ԱՇԱԿԵՐՏ Բ. ԴԱՍՈՒ
Ն՝՝՝ասպ
ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂ
Զմ՝՝՝ոնոցի։

Ծ՛ԱՌ Ե·

ՅԱՂԱԳԻՍ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ

ՊԱՏԿԱՌԵԼԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՔ

Ընաշխարհիկ սիրոյ կայծ լմն եռանդեան 'ի սերկեան աւուրս ախորժ ազդեցութեամբ արծարծեալ 'ի վառարանի հոգւոյս, հրաւէր կարդայ նուաստս ելանել հանդիսանալ յայս ասեան փառաշուք· և փափաքելի տենչանօք զնոյն ինքն զսէրն անմահ նիւթ առնուլ բանիցս, և գեղգեղել 'ի լսելիս Ազգասէր Հանդիսականացդ։ Որոյ վասն չ'դանդաղիմ հրաւիրել զսիրախումբ ժողով ուսումնասէր Կաճառիդ, 'ի յօժար մտադրութիւն ներկայ ատենաբանութեան խմում զսիրոյ՝ որ է հիմն հաստատութեան աշխարհի։

Արդ՝ աղնուագոյն և գերաստիճան 'ի մարդկային կիրս հոգւոյ զսէրն դոլ գիտեմ· որով տիրապէս փառաւորի և աղնուանայ բանականութիւն մեր։ Եւ չէք ինչ գերագոյն երջանկութիւն մարդոյ յայսմ աշխարհի՝ քան զընաշխարհիկն զայն անհամեմատ սէր·

որ երփնեռանդ և լուսափայլ զգեստուք առաքինութեան պայծառացուցեալ առաքէ զմարդիկ մեծաւ հանդիսիւ յանճառահրաշ փառսն յաւիտենական։ Քանզի որ ընկերանայ սիրով ընդ ամենեսին, ամենայն բարիք և անհնարինք գիւրին նմա· երջանիկ լինի կեանք նորա· ոչ զոք վշտացուցանէ և ոչ յուսեալ վշտանայ· այլ միշտ կայ մնայ յարաղուարձ 'ի բերկրանս։ Եւ յիրաւի այս ախորժ զգացումն ընկերական սիրոյ, հեղձուցանէ զմախանս ատելութեան, հաստատէ և նորոգէ զդաշն միակամ եղբայրութեան, ոչ մի ինչ չարիք հասուցանելով ումեք· զի ըստ Անուանեալն ընտրութեան, «Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ»։

Տեսէք ապա զմեծ զօրութիւն անզուգական սիրոյ· չար ոչ առնէ ասէ, որում հեռուի ասել, զի ամենայն բարիք 'ի սիրոյ յառաջանան, և կարի յիրաւունս։ Քանզի սիրով հաստատին թագաւորութիւնք· սիրով բարգաւաճին գիտութիւնք· 'ի սիրոյն արմատոյ վերընձիւղին ասաք առաքինութեանց, և սիրով մանաւանդ համայնատարած աշխարհս կայ հաստատուն։ Քանզի եթէ չ'գոյր սէր ընկերական, վաղուց աշխարհս 'ի բաց քանդեալ էր· և մարդիկ իբրև զվայրենաբարոյ անասունս թափառական շրջէին 'ի լերինս ամայիս, և բնակութիւն նոցա լինէր 'ի քարանձաւս և 'ի մորիս ոտիւծուց։

Այսպէս սէրն է ուրբ յօգակիրս՝ որ հաշտ առնէ և կապակցէ զմարդկան ոգիս ընդ միմեանս· յորմէ ամենայն խորհուրդք բարիք յառաջ ընթանան 'ի կատարելութեան անդր հասանել վախճան։ Եւ զի՞նչ

առաւել երջանկութիւն կայցէ մարդոյ՝ քան զայս դերագոյն շնորհ՝ զոր սէրն մատակարարէ երկուց մտերմագունից, միաւորելով զնոսա 'ի մի սիրտ՝ հաճմատութեամբ և համակամութեամբ ընդ իրեարս։ Սէրն ընկերական՝ զմարդիկ աշակերտս և սիրելս կացուցանէ երկնաւոր Վարդապետին, որ 'ի սուրբ Աւետարանի անդ պատուէր տայ Առաքելոցն, թէ «այսու ծանիցեն զձեզ մարդիկ թէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս»։ Ահա Քրիստոս զսէրն ընկերական եդ սահման, զի նովաւ մարթասցուք ըզկնի իւր ընթանալ։ Չէ արդարև չէ՛ ինչ բարի սէրն, այլ յորմէ յառաջագային ամենայն բարիք և երջանկութիւն մարդկան. զի սա է ձիր անմահ, և գլխովին անմահութիւն պարգևէ խնդրողացն իւրոց. ահեղ զօրութիւն՝ որ հալածական վարէ զատելութի, զնախանձ, զհեռ, զչարակամութիւն, զբամբասանս, զծուլութիւն, զբարկութիւն և զամենայն ախտս մոլեկանս՝ որք բնաւորեալ երևին 'ի նոյն ինքն 'ի մարդն։ Շառաւիղ սիրոյս 'ի խաղաղութեան կայ արմատացեալ. և սիրոյն է գործ խաղաղել զամենայն զհակառակորդս։ Սիրով՝ զԱստուածային բարկութիւնն զիջուցանեմք, և 'ի մեր վերայ 'ի գութ ածեմք. քանզի Խմաստութիւնն յաւիտենական 'ի վերին Աթոռոյ հայի 'ի սիրոս արարածոցս, և տեսեալ զսիրոյն կապ ընդ միմեանս սերտ ընդ սերտ լծորդեալ անքակտելի, գորովի և գթոյ հայրաբար՝ օգնական լինելով մեզ յամենայնի 'ի նեղութիւնս. որպէս և օգնական եղև և զօրացոյց յոյժ զքաջայաղթ մեծ սպարապետն մեր՝ զսուրբն Վարդան մամիկոն, և զնիզակակիցս իւր

երանելիս. որք յօժարակամ սիրով դէմ եդին անհնարին բռնութեանց ամենավատ թշնամեացն հաւատոյ, զմահ ընտրելով առաւել քան զկեանս, և այլ զանձն իւր դնելով 'ի վերայ ընկերին ազատութեան։

Բաբէ, զինչ եռանդն ընկերական սիրոյ, և զինչ կատարելութիւն համասիրտ և համախորհուրդ ընկերակցութեան. զի մինչ ցյետին շունչն արիաբար շահատակէին ընդդէմ անօրէն Պարսից։ Մեռցո՛ւք, մեռցո՛ւք դոչէին սիրով՝ միշտ եկեղեցիք մեր շէն են։ Ով աքանչելի բարբառոյս, ով անհամեմատ սիրոյս զօրութեան. որով յաղթեցին թշնամեաց, և յերկինս ընդ զօրս հրեշտակացն դասեցան. սէրն ասա կափոյց զաչս մարմնոյ սրբոցն, և անդ հոգւով պայծառացոյց։ Իսկ եթէ չունէին Երանելիքն զսէր, չէին պսակք. եթէ չգոյր սէր, և ո՛չ մրցանք. եթէ ո՛չ սէր՝ և ո՛չ բրաբիան յաղթութեան, ո՛չ պատիւ երանական և ո՛չ հանդիսա յաւիտենական։

Այլ դու ով անճառ Սէր, դու սէր անսահման՝ որ զհամայնածիրն հաստատութիւն թարթիւ չափես. սիրոյդ անուշակ, սիրոյդ չքնաղ, անթիւ են գործքն հրաշալիք և անհամար. սէրդ մեծ է և յաւերժ. շնորհ է երկնային և անմահ։ Այս էակք համբուն զսիրոյս ոսկք բարբառ. ներդաշնակեցէք լերինք բարձրաբերձք զսիրոյն քաղցրութիւն. արիք դառնիք հեզահամբոյրք զսէր մայեցէք. արիք աղաւնիք և դուք տատրակք սիրարկուք՝ զսէր գեղգեղել. արի սոխակդ քաղցրաձայն զսիրոյս կարդա՛ հրաւէր. հնչեցէք էակք համբուն և մի լռեք. օդք զսէր հնչեցէք. զսէր՝ երկինք, զսէր՝ դու երկիր,

զսէր՝ ով բնութիւնդ շնաշխարհիկ։ Հնչեա՛ և դու և մի՛ լաեր ոգիդ Հայաստանի զսիրոյս հրաւէր. զի սա նոյն ինքն սէրն է, որ վառեաց և բորբոքեաց զոգիս լուսանորոգ սրբազան Հայրապետացն մերոց Սահակայ և Մեսրովպայ. միաւորեաց ընդ միմեանս սերտիւ, և եւ գործել բազում օգտաւէտ արդիւնս յիշատակաց արժանիս։ Քանզի Միոյն՝ իբր թէս արծուոյ եւ սլանալ մոօք յերկնայինն կամար, և ընդունել մատամբ Արարչին ընչանագիրս դպրութեան Հայոց. և Միւսոյն՝ հայրական պաշտպանութեամբ հոգալ զԱզգն, և կրթել զմանկունս յուսումն գիտութեան. որովք բարձրացաւ փառքն Հայաստանի անդր քան զչափ։

Քանզի ընկերական սիրով սկիզբն արարին երանելիքն ձգել զլայնապատառ արօրն Աստուածգիտութեան, և ակօսաբեկ արարին զկորդացեալ և զխոպանացեալ երկիր բանական. և արփիափայլ ծաւալմամբ տարածեցին վարդածզի զանաղօտ և զանշմանդաղ լոյս Աստուածգիտութեան և իմաստութե՛ի լայնածաւալ ծիրանածիր դաշտն Այրարատեան. և հայրախնամ սիրով բոցակիզեալ հալեալ սպառեցին միանգամայն զսառն տգիտութեան, և զամառնակէզ դաշտորայսն Հոգւոյն վտակաւն զովացուցին։ Օ՛ որոց և մեք այսօր զհանրատենչ յիշատակն մեծաւ հանդիսիւ կատարեմք անկեղծ և յաւիտենական երախտագիտութեամբ։

Այդ՝ եթէ այսքան բարիք և փառք և յաւիտենական երջանկութիւն՝ ի սիրոյ աստի յառաջանան, մի՛ երբեք դանդաղեսցուք ապա՝ ի դործ ածել

զնորայն զօրութիւն երկնաձիր։ Տի՛ն մանկունքդ Աբրամեան, եկայք՝ ի հրաւէր սիրոյս. եկայք, միացարուք սուրբ յոդիս սիրոյ. ի խոր քանդակեցէք՝ ի տախտակ սրտից ձերոց զսիրոյն անուշակ տպաւորութիւն. սիրեցէք զԱստուած, սիրեցէք զԱզգն, սիրեցէք զընկերս Ձեր իբրև զանձինս Ձեր. զի և սէրն անսահման՝ Աստուածն յաւիտենական սիրեսցէ զզՁեզ հայրական սիրով. և պահպանողական Աջովն զերծ պահելով զՁեզ՝ ի կենցաղումս յամենայն վտանգից և պատահարաց հոգւոյ և մարմնոյ, յետ աստի վաղանցուկ կենացս տարեալ հասուսցէ՝ ի վերին Երուսաղէմ, ի խորանս արդարոց. ուր յարաղուարձ է խնդութիւն և փառքն անպատում։

ԱՀԱԿԵՐՏ Գ. ԴԱՍՈՒ

Ն՝ասպ

ՈՒՐԱՐԱԿԻՐ ԲԱՐՍԵՂ.

Պոլսեցի Այպալեան։



4525 - 4526

<< Ազգային գրադարան
Դր. NL0031474

<< Ազգային գրադարան
NL0031473

2013

<< Ազգային գրադարան
NL0031466

<< Ազգային գրադարան
NL0031472

<< Ազգային գրադարան
NL0031465

<< Ազգային գրադարան
NL0031471

<< Ազգային գրադարան
NL0031464

<< Ազգային գրադարան
NL0031470

<< Ազգային գրադարան
NL0031463

<< Ազգային գրադարան
NL0031469

<< Ազգային գրադարան
NL0031475

4374 77 80 83
75 78 81 84
76 79 82